ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 14 » .փետրվարի 2017թ. N 36-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N 13-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի դրույթներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայկական միրգ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհուրդ ստեղծելու մասին» N 13-Ա հրամանի 1-ին կետում՝

1) «Արամ Օհանյան Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման վարչության պետ (համաձայնությամբ)»

տողը փոխարինել

«Գայանե Գևորգյան Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման վարչության պետի տեղակալ (համաձայնությամբ)»

տողով,

2) «Վարդան Համբարձումյան» տողում «նախագահ» բառից հետո լրացնել «(համաձայնությամբ)» բառը:

Ի. ԱՌԱՔԵԼՅԱՆ